ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔ

ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 01.08.2014թ.-01.08.2015թ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ**

ՁՈՐԱՂԲՅՈՒՐ 2015

Հարգելի Ջորաղբյուրցիներ Ձեզ է ներկայացվում 01.08.2014թ-01.08.2015թ ժամանակահատվածում համայնքի ղեկավարի և աշխատակազմի կողմից կատարված աշխատանքների մասին հաշվետվությունը

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Նախ համառոտ ներկայացնեմ 2014 թվականի բյուջեի կատարման ընթացքը տարվա կտրվածքով

Համայնքի բյուջեի կատարման հաշվետվության տվյալներով, 2014 թվականի ճշտված բյուջեն ըստ եկամուտների կազմել են՝ 58627.8 հազ.դրամ,իսկ ծախսերը՝61233.0 հազ դրամ,պակասորդը կազմել է 2224.8 հազ.դրամ,որը լրացվել է բյուջեի տարեսկզբի մնացորդի հաշվին:Բյուջեի տարեկան փաստացի կատարողականը եկամուտների գծով կազմել է 54575.4 հազ դրամ,կամ 93 տոկոս,իսկ ծախսերը կազմել են 52177.4 հազ. դրամ,հողի օտարումից եկամուտները նախատեսված 50000.0 հազ.դրամի փոխարեն կազմել են՝ 56047.9 հազ.դրամ:

2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ՝

1/Աշխատակազմի պահպանման ծախսերը կազմել են՝38320.3 հազ դրամ,այդ թվում կատարվել է գյուղապետարանի շենքի կապիտալ վերանորոգում,ձեռք են բերվել վարչական սարքավորումներ

2/Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերը կազմել է 202.4 հազ.դրամ,

3/ Մշակույթ,կրոն ,սպորտ ծրագրով ծախսվել է 125.0 հազ դրամ,

4/ Կրթության ծրագրով ծախսվել է 18973.5 հազ դրամ,այդ թվում 1780.0 հազ դրամը տրամադրվել է ,որպես անհատույց դրամական օգնություն ուսման վարձի դիմաց 14378.7 հազ դրամ տրվել է Ջորաղբյուրի մանկապարտեզին որպես սուբսիդիա,ընթացիկ դրամաշնորհ է հատկացվել Ջորաղբյուրի միջնակարգ դպրոցին,ինչպես նաև կատարվել է դպրոցի դասասենյակների վերանորոգում:

5/ Ճանապարհային տնտեսության ծրագրով ծախսվել է 29567.9 հազ.դրամ,որի շնորհիվ կատարվել է համայնքի ճանապարհների կապ.վերանորոգում,նոր ճանապարհների կառուցում:

6/ Ջրամատակարարում ծրագրով ծախսվել է1079.6 հազ դրամ,վերանորոգվել են ջրագծեր:

7/կատարվել են աղբահանության և բնակ կոմունալ տնտեսության ծախսաեր

8/ սոցիալական պաշտպանություն ծրագրով 1000.0 հազ դրամ հատկացվել է սոց անապահով բնակչությանը:

2014 թվ.դեկտեմբերի 25-ին համայնքի ավագանու թիվ 53-Ն որոշմամբ հաստատվեց համայնքի 2015 թվականի բյուջեն,որը եկամուտների գծով նախատեսվել է 62837.5 հազ.դրամ ,իսկ ծախսերի գծով՝83880.0 հազ.դրամ,պակասորդը կազմել է 20826.5 հազ դրամ ,որը լրացվել է բյուջեի տարեսկզբի մնացորդի-հաշվին

01.08.2015 թվականի դրությամբ հավաքագրվել են 29571.4 հազ դրամ եկամուտներ,որը կազմում է բյուջեով նախատեսվածի 47% -ը,այդ թվում՝

1/հողի հարկ՝ 1864.8 հազ դրամ,	47 %
2/գույքահարկ՝14266.7 հազ դրամ,	71 %
3/տեղական տուրքեր՝320.0հազ դրամ,	26 %
4/հողի վարձավճարներ՝ 715.7 հազ դրամ,	75 %
5/գույքի վարձակալության վճ՝ 350.0 հազ դրամ,	100 %
6/տեղական վճարներ՝ 70.0 հազ դրամ,	117%
7/ ինքն.կառ.շինութ.օրինակ.գում.՝ 1673.3 հազ դրամ,	36 %

01.08.2015 թվականի դրությամբ պետական դոտացիան կազմել է 10311.2 հազ դրամ

Հողի օտարումից եկամուտները կազմել են 24532.4. հազ.դրամ

01.08.2015թ.դրությամբ ծախսերը կազմելէ 55031.8 հազ դրամ,որը կազմում է բյուջեով նախատեսվածի 83.5 %-ը:

2.ՕՐԵՆՍԴԻՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐ,ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2015 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման ծախսերը կազմել են՝ 23735.8 հազ դրամ:

Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների համար ծախսվել է 101.6 հազ դրամ:

3.ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի համար ռազմավարական նշանակություն ունի ճանապարհների վերանորոգման և նոր ճանապարհների կառուցման հարցը:

01.08.2015 թվականի դրությամբ համայնքում կատարվել է ճանապարհների կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ 7333.2 հազ դրամ արժողությամբ,կառուցվել է ճանապարհ՝ 9636.6 հազ.դրամ արժողությամբ, նախատեսվում է կատարել նոր ճանապարհի կառուցման և Զորաղբյուրի այգետարածքի ճանապարհների մասնակի վերանորոգման աշխատանքներ:

4.ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքում կատարվել են կուտակված աղբի հավաքման և տեղափոխման աշխատանքներ ,որի համար ծախսվել է 1390.3 հազ դրամ:Տարվա կտրվածքով 90.0 հազ դրամ բնապահպանության վճար փոխանցվել է պետական բյուջե:

5. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Փողոցների լուսավորման համակարգի սպասարկման և պահպանման համար ծախսվել է 864.8 հազ դրամ:Կառուցվել են ջրագծեր 2925.5 հազ.դրամ արժողությամբ

6.ՀԱՆԳՍՏԻ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում մեծ ուշադրություն է դարձվում սպորտի ,երիտասարդության և մշակույթի խնդիրներին,մասնավորապես հաշվետու ժամանակաշրջանում ապահովվել է համայնքի մասնակցությունը Բազե- 2015 մարզային հավաքին:

7.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կթության հիմնախնդիրները՝ մշտապես գտնվել են համայնքի ղեկավարի և ավագանու ուշադրության կենտրոնում:Մեծ ուրախությամբ պետք է նշեմ ,որ հաջողությամբ գործում է Զորաղբյուրի մանկապարտեզը,որտեղ հաճախող շուրջ 65 երեխաները շրջապատված են մեծ հոգատարությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում մանկապարտեզին տրամադրվել է 6322.4 հազ դրամ սուբսիդիա:

Մեծ ուշադրություն է հատկացվել հանրապետության ԲՈՒՀ-երում և քոլեջներում սովորող անապահով ընտանիքների երեխաներին,որոնց համար հաշվետու ժամանակաշրջանում տրամադրվել է 710.0 հազ դրամ անհատույց դրամական օգնություն ուսման վարձի դիմաց:

8.ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հսկողություն է իրականացվում առևտրի,հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ;Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի,ժամը 24^{00}–ից հետո աշխատելու,8 թույլտվություններ,որոնցից գանձվել են համապատասխան տուրքի գումարներ:

9.ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում մշտական հոգածությամբ է շրջապատված սոցալապես անապահով բնակչությունը:Հաշվետու ժամանակաշրջանում նրանց տրամադրվել է 500.0 հազ դրամ անհատույց դրամական օգնություն,որից բնակչությանը տրվել է 400.0 հազ.դրամ ,100.0 հազ դրամ տրվել է ՀՄՊ մասնակիցներին և վետերաններին:

9.ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքում կատարվել են հողի կատեգորիայի փոփոխություններ,ուղղակի վաճառքներ, որոնց շնորհիվ համայնքի բյուջե է մուտքագրվել 24532.4 հազ. դրամ,որը օգտագործվել է համայնքի կապիտալ ծախսերի իրականացման համար: